ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«15» հոկտեմբերի 2021 թ. № 1158-Ա

ՀՐԱՄԱՆ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՌԻՍԿԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ՁԵՎԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N1327-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 7-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել.

1) ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների բացթողումից հետո ռիսկերի պրոֆիլներին համապատասխան մաքսային հսկողության օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառնությունների հերթականությունը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումների էլեկտրոնային գրանցամատյանի և մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ)

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2021 թվականի նոյեմբերի 15-ի
N 1158 - Ա հրամանի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՌԻՍԿԵՐԻ ՊՐՈՖԻԼՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ՁԵՎԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն հավելվածը սահմանում է ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների բացթողումից հետո ռիսկերի պրոֆիլներին համապատասխան մաքսային հսկողության օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ մաքսային ստուգում իրականացնելու իրավասություն ունեցող ստորաբաժանման պաշտոնատար անձի (այսուհետ՝ Ստուգում իրականացնող պաշտոնատար անձ) կողմից իրականացվող գործառնությունների հերթականությունը:

2. Ստուգում իրականացնող պաշտոնատար անձն ապրանքների բացթողումից հետո մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը (այսուհետ՝ Կամերալ մաքսային ուսումնասիրությունը) իրականացնում է ռիսկերի պրոֆիլներին համապատասխան: Ստուգումն իրականացվում է ռիսկերի կառավարման համակարգում տեղայնացված ռիսկերի պրոֆիլների համաձայն հսկողության ակտում արտացոլվող՝ ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության նպատակով ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման ցուցումներին համապատասխան՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020 թվականի ապրիլի 16-ի N336-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված՝ ռիսկերի նվազեցման միջոցառումների դասակարգիչը:

3. Ստուգում իրականացնող պաշտոնատար անձը Կամերալ մաքսային ուսումնասիրությունն իրականացնում է նաև հետևյալ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա.

1) մաքսային հսկողության իրականացման արդյունքներ՝ նախքան ապրանքների բացթողումը և դրանից հետո.

2) մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսներ.

3) նախորդ մաքսային ստուգումների արդյունքներ.

4) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բանկեր, ոչ բանկային վարկային (ֆինանսավարկային) կազմակերպություններ և բանկային գործառնությունների առանձին տեսակներ իրականացնող կազմակերպություններ"

5) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային և (կամ) այլ պետական մարմիններ.

6) զանգվածային լրատվամիջոցներ.

7) տեղեկատվության այլ աղբյուրներ:

4. Սույն հավելվածի 3-րդ կետում նշված դեպքում ստուգում իրականացնող պաշտոնատար անձն անճշտություններ, անհամապատասխանություններ և (կամ) խախտումներ (այսուհետ՝ Անհամապատասխանություններ) հայտնաբերելու դեպքում ստուգմանն առնչվող նյութերը էլեկտրոնային և (կամ) թղթային եղանակով հանձնում է մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող անձին՝ համապատասխան նշում կատարելով սույն հրամանի N2 հավելվածի Ձև N1-ով հաստատված՝ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումների էլեկտրոնային գրանցամատյանում (այսուհետ՝ Գրանցամատյան): Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող անձն Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմում է սույն հավելվածի 9-րդ կետով նախատեսված և սույն հրամանի N2 հավելվածի Ձև N2-ով հաստատված՝ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն), որը կազմելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ստանալու փաստը հաստատելու հնարավորություն նախատեսող ցանկացած եղանակով մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվում է հայտարարատուին:

5. Կամերալ մաքսային ուսումնասիրության ընթացքում սույն հավելվածի 2-ից 4-րդ կետերին համապատասխան ընտրված յուրաքանչյուր գործարք ուսումնասիրվում է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11.04.2017թ. պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝

Օրենսգիրք) 324-րդ և 326-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից պահանջվում և ստացվում են Օրենսգրքի 340-րդ հոդվածով սահմանված կարգով:

6. Սույն հավելվածի 2-րդ և 5-րդ կետերին համապատասխան Կամերալ մաքսային ուսումնասիրության արդյունքում Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով ու ակտերով և Հայաստանի Հանրապետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների կիրառման հնարավոր Անհամապատասխանություններ չհայտնաբերելու դեպքում մաքսային գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնատար անձը ռիսկերի կառավարման համակարգի հսկողության ակտում ընտրում է «Անճշտություններ, անհամապատասխանություններ և (կամ) խախտումներ չեն հայտնաբերվել» պատասխան՝ հիմք ընդունելով Հրամանը:

7. Սույն հավելվածի 3-րդ և 5-րդ կետերին համապատասխան Կամերալ մաքսային ուսումնասիրության արդյունքում Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով ու ակտերով և Հայաստանի Հանրապետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների կիրառման հնարավոր Անհամապատասխանություններ չհայտնաբերելու դեպքում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող անձը դրական արդյունքների մասին նշում է կատարում Գրանցամատյանում՝ սույն հավելվածի 13-րդ կետին համապատասխան:

8. Սույն հավելվածի 2-րդ և 5-րդ կետերին համապատասխան՝ Կամերալ մաքսային ուսումնասիրության արդյունքում Անհամապատասխանություններ հայտնաբերվելու դեպքում մաքսային գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնատար անձը ռիսկերի կառավարման համակարգի հսկողության ակտում ընտրում է «Հայտնաբերվել են անճշտություններ, անհամապատասխանություններ և (կամ) խախտումներ» պատասխան, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան գրավոր հիմնավորում ներկայացնելու պարագայում հսկողության ակտում ավելացնում է ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման ցուցում՝ հիմք ընդունելով Հրամանը:

9. Սույն հավելվածի 8-րդ կետին համապատասխան՝ Կամերալ մաքսային ուսումնասիրության արդյունքում Անհամապատասխանություններ հայտնաբերվելու դեպքում մաքսային գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող

ստորաբաժանման պաշտոնատար անձը ստուգմանն առնչվող նյութերը էլեկտրոնային և (կամ) թղթային եղանակով հանձնում է մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող անձին՝ համապատասխան նշում կատարելով Գրանցամատյանում: Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող անձը ներկայացված տեղեկատվության հիման վրա իրականացված վերլուծության արդյունքում Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմում է Արձանագրություն, որում նշվում են՝

1) արձանագրության համարը, այն կազմելու ամիսը, ամսաթիվը և տարին.

2) մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը"

3) հայտարարատուի լրիվ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) և հասցեն.

4) ապրանքների հայտարարագրի համարը և ամսաթիվը, որի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են Անհամապատասխանություններ.

5) Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով ու ակտերով, Հայաստանի Հանրապետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների (հնարավոր) խախտումների ընդհանուր նկարագիրը:

10. Արձանագրությունը կազմելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ստանալու փաստը հաստատելու հնարավորություն նախատեսող ցանկացած եղանակով մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվում է հայտարարատուին:

11. Սույն հավելվածի 8-րդ կետին համապատասխան, Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում հայտարարատուն ծանուցվում է Կամերալ մաքսային ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված Անհամապատասխանության վերաբերյալ, որով հայտարարատուին առաջարկվում է Օրենսգրքի 340-րդ հոդվածով սահմանված կարգով և մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետներում մաքսային ստուգում իրականացնելու իրավասություն ունեցող ստորաբաժանում ներկայացնել մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ կամ նույն ժամկետներում դիմել ապրանքների հայտարարագիրը գրանցած մաքսային մարմին՝ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների հայտարարագրում հայտարարագրված տեղեկություններում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու

համար՝ այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնելով մաքսային ստուգում իրականացնելու իրավասություն ունեցող ստորաբաժանմանը:

12. Կամերալ մաքսային ուսումնասիրության ընթացքում արդյունքները գնահատվում են՝ հայտարարատուին սույն հավելվածին համապատասխան ծանուցելու արդյունքում վերջինիս կողմից սույն հավելվածի 11-րդ կետում նշված ժամկետում իրականացված գործողությունների հիման վրա:

13. Արձանագրությունը կազմած՝ Ստուգում իրականացնող պաշտոնատար անձը կատարված աշխատանքների ընթացքի, ինչպես նաև դրական կամ բացասական արդյունքների վերաբերյալ Գրանցամատյանում կատարում է համապատասխան նշում, ինչի հիման վրա մաքսային գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող անձը հսկողության ակտում ընտրում է հետևյալ պատասխաններից մեկը՝ հիմք ընդունելով Հրամանը.

1) դրական արդյունքներ՝

ա. սույն հավելվածի 11-րդ կետով նախատեսված ժամկետում հայտարարատուի կողմից ներկայացված ապրանքների հայտարարագրի կամ օրենսդրությամբ սահմանված դրան փոխարինող այլ փաստաթղթերի ճշգրտում չիրականացվելու և Արձանագրությամբ նշված Անհամապատասխանությունները հայտարարատուի կողմից ներկայացված հիմնավորված փաստաթղթերով ամբողջությամբ չեզոքացվելու դեպքում ռիսկերի կառավարման համակարգի հսկողության ակտում մաքսային հսկողության գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը ընտրում է «Չճշգրտված՝ հիմնավոր» պատասխանը"

բ. հայտարարատուի կողմից ապրանքների հայտարարագրի ճշգրտման ձևը կամ օրենսդրությամբ սահմանված դրան փոխարինող փաստաթուղթը, սույն հավելվածի 11-րդ կետով նախատեսված ժամկետում ներկայացված լինելու և Արձանագրությամբ ներկայացված Անհամապատասխանությունները ամբողջությամբ ուղղված լինելու դեպքում ռիսկերի կառավարման համակարգի հսկողության ակտում մաքսային հսկողության գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը ընտրում է «Ճշգրտված» պատասխանը:

2) բացասական արդյունքներ՝

ա. հայտարարատուի կողմից ապրանքների հայտարարագրի ճշգրտման ձևը կամ օրենսդրությամբ սահմանված դրան փոխարինող փաստաթուղթը սույն հավելվածի 11-րդ կետով նախատեսված ժամկետում չներկայացվելու դեպքում կամ եթե հայտարարատուի

կողմից վերջնական ներկայացված փաստաթղթավորված հիմնավորումները բավարար չեն Արձանագրությամբ ներկայացված Անհամապատասխանությունները չեզոքացված համարելու համար կամ հայտարարատուի կողմից մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, ինչպես նաև փաստաթղթավորված հիմնավորումներ չներկայացնելու դեպքում ռիսկերի կառավարման համակարգի հսկողության ակտում մաքսային հսկողության գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը ընտրում է «Ճշգրտված՝ ոչ հիմնավոր» պատասխանը:

14. Այն դեպքում, երբ Կամերալ մաքսային ուսումնասիրություն իրականացնելիս մաքսային մարմինների տրամադրության տակ առկա տեղեկատվությունը հիմք է հանդիսանում Գրանցամատյանում նշված Անհամապատասխանությունները չեզոքացնելու համար, և հայտարարատուից լրացուցիչ հիմնավորումներ ստանալու անհրաժեշտությունը բացակայում է, ապա մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից Գրանցամատյանում կատարվում է համապատասխան նշում, ինչի հիման վրա մաքսային գործարքների նկատմամբ հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը ընտրում է սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված՝ «Ճշգրտված՝ հիմնավոր» պատասխանը՝ հիմք ընդունելով Հրամանը:

15. Հայտարարատուի կողմից ապրանքների հայտարարագրում կամ օրենսդրությամբ սահմանված դրան փոխարինող փաստաթղթերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով, հայտարարատուն ապրանքների հայտարարագրի ճշգրտման ձևի կամ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթի հետ մաքսային մարմին պետք է ներկայացնի Արձանագրությունը, որի հիման վրա իրականացվում փոփոխությունները և (կամ) լրացումները:

16. Ապրանքների հայտարարագրի կամ օրենսդրությամբ սահմանված դրան փոխարինող փաստաթղթերի ճշգրտում իրականացնող մաքսային մարմինը այդպիսի ճշգրտումը գրանցելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմնի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ապրանքների հայտարարագրի ճշգրտման կամ օրենսդրությամբ սահմանված դրան փոխարինող այլ փաստաթղթի համարի և ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում մաքսային ստուգում իրականացնելու իրավասություն ունեցող ստորաբաժանում:

17. «Չճշգրտված՝ ոչ հիմնավոր» պատասխանի դեպքում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձը կազմում է Կամերալ մաքսային ուսումնասիրության արդյունքում Անհամապատասխանություններ հայտնաբերելու վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանք (այսուհետ՝ Տեղեկատվական-վերլուծական տեղեկանք), որտեղ արտացոլվում են ներկայացված Անհամապատասխանությունները, ինչն ուսումնասիրության արդյունքների և Արձանագրություն հետ միասին, հետագա ընթացքն ապահովելու նպատակով տրամադրվում է մաքսային ստուգում իրականացնող համապատասխան բաժիններ՝ կամերալ կամ արտագնա մաքսային ստուգումներ իրականացնելու համար՝ այդ մասին համապատասխան նշում կատարելով Գրանցամատյանում:

18. Սույն հավելվածի 3-րդ կետի շրջանակներում իրականացված Կամերալ մաքսային ուսումնասիրության արդյունքում Անհամապատասխանություններ հայտնաբերվելու դեպքում սույն հավելվածի 11-րդ կետով սահմանված ժամկետում հայտարարատուի կողմից իրականացված գործողությունների հիման վրա հայտնաբերված Անհամապատասխանությունները չեզոքացվելու դեպքում մաքսային, այլ փաստաթղթերի և տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից Գրանցամատյանում կատարվում է համապատասխան նշում (դրական արդյունքներ), իսկ հայտնաբերված Անհամապատասխանությունները հաստատվելու և դրա արդյունքում կամերալ կամ արտագնա մաքսային ստուգում իրականացնելու անհրաժեշտության դեպքում Գրանցամատյանում կատարվում է համապատասխան նշում բացասական արդյունքների մասին և կազմվում է Տեղեկատվական-վերլուծական տեղեկանք, որն ուսումնասիրության արդյունքների և Արձանագրություն հետ միասին հետագա ընթացքն ապահովելու նպատակով ուղարկվում է մաքսային ստուգում իրականացնող համապատասխան բաժիններ՝ կամերալ կամ արտագնա մաքսային ստուգումներ իրականացնելու համար:

19. Կամերալ կամ արտագնա մաքսային ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից մաքսային ստուգման արդյունքների վերաբերյալ համապատասխան նշումներ են կատարվում Գրանցամատյանում, իսկ սույն հավելվածի 2-րդ կետին համապատասխան՝ Կամերալ մաքսային ուսումնասիրություն իրականացնելու դեպքում Գրանցամատյանում կատարվող նշումների հետ միասին մաքսային գործարքների նկատմամբ հսկողություն

իրականացնող պաշտոնատար անձը Գրանցամատյանում կատարված նշումների հիման վրա ընտրում է սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված պատասխաններից որևէ մեկը:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2021 թվականի նոյեմբերի 15 -ի
N 1158 - Ա Հրամանի
Ձև N 1

ՄԱՔՍԱՅԻՆ, ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում իրականացնող պաշտոնատար անձը	Տեղեկատվությունը փոխանցելու ամսաթիվը, ամիսը, տարին	Հայտարարատուի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Հայտարարատուի լրիվ անվանումը	Ապրանքների հայտարարագրի համարը	Հնարավոր անճշտության, անհամապատասխանության և (կամ) խախտման նկարագիրը	Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրություն իրականացնող անձը	Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետագա ուսումնասիրության ընթացք կամ իրականացված աշխատանքներ

Դրական արդյունք		Բացասական արդյունք	Հետադարձ կապ
Չճշգրտված՝ հիմնավոր	Ճշգրտված	Չճշգրտված՝ ոչ հիմնավոր	

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

_____

(Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում իրականացնող ստորաբաժանման անվանումը)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____

ՄԱՔՍԱՅԻՆ, ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » 20 թ. ք. Երևան

_____

(Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

(Հայտարարատուի լրիվ անվանումը, ՀՎՀՀ-ն և հասցեն)

Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման աշխատանքների իրականացման հիմքը՝

_____

(Փաստաթղթի անիս-անսաթիվը և համարը)

Տեղեկատվական ռեսուրսները՝

_____

(Տեղեկատվության աղբյուրի թվարկումը)

Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման ընթացքում պարզվել է՝

_____

(ՈՒսումնասիրության արդյունքի նկարագիրը)

_____

_____

Հետևություններ՝

_____

(Հետևությունների նկարագիրը)

_____

_____

Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման աշխատանքներն իրականացրած պաշտոնատար անձինք՝

(Պաշտոնատար անձի պաշտոնը)	(Անունը, ազգանունը)	(Ստորագրությունը)
(Պաշտոնատար անձի ղեկավար)	(Անունը, ազգանունը)	(Ստորագրությունը)

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am